ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

30.08.2018թ.
ժամը 11[00]

Ի գիտություն. Հաշվի առնելով պատասխանատու ստորաբաժանման 25.07.2018թ. N 512-1389 գրությունը՝ համաձայն որի, ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ շահագործման և պլանավորման բաժնի սպա, մայոր Ս. Ստեփանյանը զորացրվել է, ուստի ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի 2018թ. ապրիլի 14-ի № 277/ԴՎԱ հրամանում 30.07.2018թ. կատարվել է փոփոխություն և Ս. Ստեփանյանի փոխարեն որպես հանձնաժողովի գնահատող անդամ ընդգրկվել է ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյանը:

Մասնակցում էին՝
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության պետի տեղակալ, գնդապետ Տ. Մաթևոսյան,
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ տեխնիկական ապահովման վարչության ինժեներական, քիմիական և հետախուզական միջոցներով ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ա. Սիմոնյան,
ՀՀ ԶՈՒ ՍՎ ԱԾ հաշվառման բաժնի պետ, գնդապետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության բաժնի ավագ սպա, մայոր Հ. Բարսեղյան:
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության սպառազինության և ռազմական տեխնիկայի գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ա.Ամիրյան:

Բացակայում է ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի սպա, մայոր Կ. Բրուտյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ա. Ամիրյան)

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ բաց մրցույթի ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) առաջարկված ապրանքի (ապրանքների) ամբողջական նկարագիրը և դրանց ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Ա. Ամիրյան)

1.1 Սույն ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքում 1-ին տեղ զբաղեցրած բոլոր մասնակիցները ներկայացրել են «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող փաստաթղթերը: «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի, «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի, «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի և «ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի՝ ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով պահանջվող՝ հայտով առաջարկված ապրանքների (ապրանքների) ամբողջական նկարագրերը առկա են և գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին բավարարող:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի, «ՍՎա Մոթորս» ՍՊԸ-ի, «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի, «Տիգվան» ՍՊԸ-ի, «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են հետևյալ անհամապատասխանությունները.

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ում որպես ապրանքային նշան նշվել են կատալոգային կոդեր, որոնք չեն հանդիսանում ապրանքային նշան: Միաժամանակ գնահատող հանձնաժողովը հնարավորություն չունի գնահատելու «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրերը, քանի որ տեխնիկական բնութագրում կատալոգային կոդերը նշված չեն:

«ՍՎա Մոթորս» ՍՊԸ-ի՝ հայտով առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերում առկա են անհամապատասխանություններ, մասնավորապես՝ մասնակցի կողմից 13-րդ չափաբաժնի (Բեռնատար մեքենաների պահեստամասեր (Հովացման համակարգի ջրի մղիչ հավաքական)) մասով ներկայացված կատալոգային կոդի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հովացման համակարգի ջրի մղիչ հավաքականի միացման փոկանիվը տարբերվում է և չի համապատասխանում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված կատալոգային կոդով նախատեսված հովացման համակարգի ջրի մղիչ հավաքականի միացման փոկանիվին:

Ըստ սույն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ 24-րդ չափաբաժնի (Բեռնատար մեքենաների պահեստամասեր (Ղեկային մեխանիզմ հավաքական)) կատալոգային կոդով պահանջվում է, որ ղեկային մեխանիզմ հավաքականը լինի թևիկով (coaxa), մինչդեռ մասնակցի կողմից առաջարկվածը առանց թևիկի (coaxa) է:

Ըստ սույն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ 65-րդ չափաբաժնի (Բեռնատար մեքենաների պահեստամասեր (Գլան հավաքական)) կատալոգային կոդով պահանջվում է, «Եվրո» չափանիշի, մինչդեռ մասնակցի կողմից առաջարկվածը հասարակ է:

Միաժամանակ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրով նախատեսված է, որ ապրանքները պետք է լինեն գործարանային փաթեթավորմամբ, մինչդեռ մասնակցի կողմից ներկայացված հավելված 6.1-ում ապրանքների գործարանային փաթեթավորմամբ լինելու մասին տեղեկատվությունը բացակայում է:

«Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ում որպես ապրանքային նշան նշվել է ապրանքների կատալոգային կոդերը, որոնք չեն հանդիսանում ապրանքային նշան:

«Տիգվան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերում բացակայում է հավելված 6.1-ը (առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիր):

«ԱԲԻ» ՍՊԸ-ի՝ հայտով առաջարկված ապրանքի ամբողջական նկարագրում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ըստ սույն ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի՝ 64-րդ չափաբաժնի (Բեռնատար մեքենաների պահեստամասեր (Հետին զսպակ հավաքական)) կատալոգային կոդով նախատեսվում է 14 թերթանոց հետին զսպակ, իսկ ըստ մասնակցի կողմից ներկայացված կատալոգային կոդի դրանք 14-ից պակաս են:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացության համաձայն՝ մասնակիցները Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չունեն:

Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամատասխանությունները և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը, գնահատող հանձնաժողովը 01.08.2018թ. որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

«Իդեալ Թրավել» ՍՊԸ-ն, «ՍՎա Մոթորս» ՍՊԸ-ն, «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ն, «Տիգվան» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում ներկայացրել են պահանջվող շտկումները, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխանող: «ԱԲԻ» ՍՊԸ-ն պահանջվող շտկմանն ի պատասխան ներկայացրել է գրություն (կցվում է)՝ գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանության հետ կապված: Քննարկելով «ԱԲԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գրությունը, գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած փաստաթղթերը գնահատել հրավերի պահանջներին համապատասխանող:

1.2 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի գնահատման նիստի ավարտի օրը՝ 09.08.2018թ., հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ գնահաող հանձնաժողովը որոշեց «ԼՈՒ-ԼԻ-ԼՈՒ» ՍՊԸ-ի, «Ժակ և Գոռ» ՍՊԸ-ի, «Լավ Ընկեր» ՍՊԸ-ի, «ԿԱՄԱՋ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ի, «Իդեալ Թրավել» ՍՊԸ-ի, «ՍՎա Մոթորս» ՍՊԸ-ի, «Վ ԵՎ Ն ՄՈՒՐԱԴՅԱՆՆԵՐ» ՍՊԸ-ի, «Տիգվան» ՍՊԸ-ի, «ԱԲԻ» ՍՊԸ-ի որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերի

պահանջներին և վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ և անգործության ժամկետի ավարտից հետո նրանց պայմանագրեր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագրեր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ա. Ամիրյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-4/5» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագրեր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	Տ. Մաթևոսյան
Գնահատող	Ս. Պետրոսյան
Գնահատող	Ա. Սիմոնյան
Գնահատող	Հ. Բարսեղյան
Գնումները համակարգող՝	Ա. Ամիրյան